Բարոն Մյունհաուզենի արկածները

Հեղինակ՝ Ռուդոլֆ Էրիխ Ռասպե

Առաջին ճանապարհորդությունս դեպի Լուսին

Բարեբախտաբար, ես հիշեցի, որ Թուրքիայում մի այնպիսի բույս կա, որը շատ արագ է աճում և, երբեմն, մինչև երկինք հասնում:

Դա բակլան է: Մի բոպե անգամ չկորցնելով՝ մի այդպիսի բակլա տնկեցի, և բակլան իսկույն սկսեց աճել:

Աճեց, աճեց ու շուտով հասավ Լուսնին:

— Ուռա՛,— գոչեցի ես և սկսեցի ցողունով վեր բարձրանալ:

Մի ժամից հետո Լուսնին հասա:

Կացինս գտնելու համար երկար ժամանակ կորցրի: Լուսինն էլ է արծաթից, կացինն էլ. արծաթը, որ արծաթի վրա դնես, չի երևա: Վերջիվերջո կացինս գտա մի կույտ փտած դարմանի մեջ:

Ուրախ-ուրախ գոտուս մեջ խրեցի և ուզում էի ցած իջնել:

Բայց չհաջողվեց. արեգակը չորացրել էր բակլայի ցողունը, որը կտոր-կտոր եղավ ու թափվեց: Վշտից լացս հազիվ պահեցի:

Ի՞նչ անել: Ի՞նչ անել: Մի՞թե ես էլ Երկիր չեմ վերադառնա: Մի՞թե ամբողջ կյանքս պիտի անցկացնեմ այս սառած Լուսնի վրա:

Օ՜, ո՛չ, ո՛չ մի դեպքում:

Վազեցի իսկույն դեպի դարմանի կույտը և սկսեցի նրանից պարան հյուսել: Պարանը կարճ դուրս եկավ, բայց ոչինչ: Սկսեցի պարանով ցած իջնել: Ձախ ձեռքով իջնում էի, իսկ աջով կացինն էի բռնել:

Շուտով պարանը պրծավ, և ես օդում կախված մնացի՝ երկնքի և երկրի միջև: Սարսափելի էր, բայց գլուխս չկորցրի:

Երկար չմտածելով, ամուր բռնեցի պարանի ներքևի ծայրը, կացնով տվի վերևի ծայրը կտրեցի և կապեցի ներքևի ծայրին: Այս բանն ինձ գետնին իջնելու հնարավորություն տվեց:

Բայց և այնպես Երկիրը հեռու էր և շատ անգամ պետք եղավ պարանի վերևի ծայրը կտրել և ներքևի ծայրին կապել: Վերջապես այնքան իջա, որ քաղաքի տներն ու պալատները երևացին: Մինչև գետնին հասնելը երեք կամ չորս մղոն էր մնում:

Եվ հանկարծ... Օ,՛ սարսափ... պարանը կտրվեց:

Ես գետնին ընկա այնպիսի ուժով, որ կես մղոն խորությամբ փոս գոյացրի:

Ուշքի գալով՝ երկար մտածեցի, թե այդ փոսից ինչպես դուրս գամ: Ամբողջ օրը ոչ կերա, ոչ խմեցի, մտածում էի ու մտածում: Եվ հանկարծ ելքը գտա. եղունգներովս աստիճաններ փորեցի և այդ սանդուղքով գետնի երես դուրս եկա:

Օ՛, Մյունխհաուզենը երբեք չի կորչի:

Հարցեր և առաջադրանքներ

1.Դուրս գրի՛ր անծանոթ բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

2.Լրացրո՛ւ պակասող բառերը**:**

Մի բոպե _____ չկորցնելով՝ մի _____ բակլա տնկեցի, և բակլան _____ սկսեց աճել:

Ուրախ-ուրախ գոտուս _____ խրեցի և ուզում էի ցած _____:

Մի՞թե _____ կյանքս պիտի անցկացնեմ այս սառած _____ վրա:

Շուտով պարանը պրծավ, և ես _____ կախված մնացի՝

երկնքի և երկրի _____:

_____ այնքան _____, որ քաղաքի տներն ու պալատները _____:

_____ օրը ոչ կերա, ոչ խմեցի, մտածում էի ու մտածում:

Եվ հանկարծ ելքը գտա. _____ աստիճաններ փորեցի և

այդ _____ գետնի երես դուրս եկա:

3.Նախադասություններն առանձնացրո՛ւ վերջակետով**:**

Մի բակլա տնկեցի բակլան իսկույն սկսեց աճել աճեց ու շուտով հասավ Լուսնին ես սկսեցի ցողունով վեր բարձրանալ մի ժամից հետո Լուսնին հասա:

4. Գրի՛ր տրված բառերի հոգնակին**:**

Օրինակ՝ բակլա-բակլաներ

Ցողուն –

Փոս –

Բույս –

Կացին –

Ժամ –

4.Նոր ավարտ հորինի՛ր**:**

Ուշքի գալով, երկար մտածեցի, թե այդ փոսից ինչպես դուրս գամ: Ամբողջ օրը ոչ կերա, ոչ խմեցի, մտածում էի ու մտածում: Եվ հանկարծ ելքը գտա....

5.Պատմի՛ր հեքիաթը (բանավոր)**:**